



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

« 29 » 04 2020թ.
Երևան

Թիվ 1/223Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿ
(ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ն 2020 թվականի ապրիլի 28-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 1,179,822,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով, 7,865,480 հատ, 150 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսերի առևտրի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 119-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի ապրիլի 29-ի թիվ 20 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գրանցել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի կողմից 2020 թվականի ապրիլի 28-ին ներկայացված հասարակ (սովորական) բաժնետոմսերի առևտրի ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ